


Տարեկան գինն է 10 ռուբլի:
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ:
Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակէ եւ տօն օրերից
առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ:
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցեով. — В. ред. газетъ «Мѣся Азіатскі», въ Тиф. сѣ., կամ, Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).



Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցեով: Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները: Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցապահանջ:
Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի ըստին 2 կօպ: Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով: Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատանը, ակովկասու հիւրանոցի տակ ալ: Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են ալ: Դատարանների պալիտիոնում:

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԼՐԱԳՐԻՆ
ԿԱՐԵԼԻ Է ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԻՍՍԱՄԵԱՅ ԺԱՄԱՆԱԿՈՎ

ԿԵՍ ՏԱՐԻՆԻՍ ԳԻՆՆԷ 5 ՌՈՒԲԼԻ:
Ստորագրվել կարելի է խմբագրատանն եւ պ. Դաւիթբեկով լրագրական գործակալութեան գրասենեակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:
Պ. Եղեանի հրատարակութիւնը. — Ձայն բարբառող յանապատի:
Ն. Երզնէի Տ. Երզնէի. — Հրաւիր. — Թղթակցութիւն Կ. Պօլսից:
Մանր լուրերը:
Խառն լուրերը:
Յայտարարութիւնները:
Բանասիրական. — Գիտնական.

ԹԻՖԼԻՍ, 16 04-ՈՍՏՈՍԻ 1884 թ.

Պ. Եղեանի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ:

Ընթերցողաց առաջ է բերուի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմիայ գիւղին հանդէպ յառաջարկով հրատարակել մեծ. պ. Կ. Եղեանցի: Գրքի յառաջարանի աշխարհարար թարգմանութիւնը հրատարակվելու: Սրապատկերը շատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԵԳԵԼԻ

(ՋՈՐՍ ՕՐՈՒՄԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ԻՐ:
Լուսնային Լեւոն Անթուանը զարթեցաւ: Նախքան օրվայ հարեցողութիւնը, դէտ ու դէտ ընկնելով, լլուր-լլուր, այս մենը շատ վատ ներգործութիւն էին արել երիտասարդի կազմուածքի եւ հոգու վրայ: Գոյնը կատարեալ մեռելի էր: Լուսն ու մուգ նա գնաց լուսացուցի, բայց երբ տեսաւ, որ իւր կնիւր տանը չէ, սաստիկ այլայլեցաւ: Մի րոպէսում հազար եւ մի դառն մտքեր ծնուցանան երիտասարդի գլխումը: Թանկարծ միտն եկաւ, որ նախքան իր կնիւրն առնելու վրայ վերադառնալ էր: Եւ ինչու, մտածում էր Լեւոնը, իւր մօր հետ վերադառնալու եւ թողնել իրան ու գնացնել: Երիտասարդը այլ ընդ այլոյ եղաւ: Փետրացածի նման մի քանի րոպէ կանգնած տեղում անշարժ մնաց: Նա զգում էր, որ կնիւրը եւ զոքանցին մօտ յանցաւոր է: Բայց, մի և նոյն ժամանակ, կարծում էր, որ զօքանին ու կնիւն էլ, իրանց հերթում, յանցաւոր են իսկ իր մօտ: Այսպիսով ամօթի, ինքնասիրութեան, սիրոյ եւ կարեկցութեան զգացմունքները մէկգլխու հետ մաքրուում էին Անթուանի սրտում եւ գլխում:
Կամացուկ Լեւոնը բաց արաւ մօր նընջարանի դուռը եւ տեսաւ, որ մայրը հանգիստ քնած է:
Մօր ննջարանին կից մի այլ սենեկ:

*) Տես՝ «Մեղու» № 62.

բաթաթերթի մի քանի համարներում եւ նորա բովանդակութիւնը համառօտ եւ մատենախօսական հայեցողաձեւը, որքան ներում էին գրաքննական օրէնքները, տպւեցան «Մեղուի» մէջ: Այդ գիրքը բովանդակում է իւր անհրաժեշտ փաստ «Մեղուի» բազմամեայ ուղղութեան ճշդութեան մասին: Թէ Հայաստանեայց եկեղեցին Հայ ազգայնութեան գլխաւոր հիմն է ու պահպանողն եւ ուր նա անհետացել է հայերի միջից եւ նորա տեղն օտար եկեղեցի բռնեւ, այդ տեղերի հայերն էլ անհետացել են: յիշատակ թողնելով միայն իրանց եկեղեցիներն, վանքերն եւ այլազգացած սերունդը:

Լեհաստանի Հայ մեծ գաղթականութեան անհետանալը ամենագեղեցիկ ապացոյց է սորա. ուստի եւ մեծ. հեղինակը վերոյիշեալ գրքի յառաջարանը վերջացնում է զԼեհաստանի Հայ գաղթականութեան բռնի միութեան հետեւանքը մարդու ստիպում է ակամայ հաւատալու, որ արտաքոյ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ չիք հաշուութիւն խօսքերով: Տարակոյս չը

կայ, որ այս գաղափարի ճշմարտութիւնը Հայ ազգի վերաբերութեամբ ներկայումս, աւելի եւս կը հաստատուի: Եթէ նոյն ձեռքով եւ այլ անհետացած Հայ գաղթականութեանց պատմութիւնը հանդէս բերել կարելի լինէր, նոյն իսկ գաղթած երկիրների պաշտօնական եւ մասնաւոր արխիւներէ: Յայտնի է, որ Ամբաստանը Լիւբլինոյ, Վենետիկ եւ այլ շատ եւրօպական քաղաքներում եղած են Հայ գաղթականութիւնը եւ այն պէտք է, որ յոյժ նշանաւոր լինէին այդ քաղաքների առեւտրական մեծութիւնն աչքի առաջ ունենալով: Բայց ո՞ր եւ նորա, չը կան, ներթափանցած լինելով նոյն վիճակին, որին զօք գնաց Լեհաստանի Հայ մեծ գաղթականութիւնը եւ ապացոյց են նոյնպէս, որ արտաքոյ լուսաւորչական Հայ եկեղեցւոյ չիք հայութիւն: Գիտնելու, որ մեր իմաստակա ազատամիտները պիտի աւան, թէ անցել է այդ ժամանակը: Ներկայ 19-երդ դարը ազգայնութեան եւ կրօնի հարցերը զանազանութեան միմեանցից եւ այլն եւ այլն: Բայց ոչ, դեռ. հայերիս համար 19-

ԻՐ.

— Դու, հարկաւ, գիտես, — ասաց ծերունին — որ այս երգի եղանակը շատ սրտաճմլիկ է: Սիրահար եւ քաղցրաձայն երիտասարդի բերանից նա աւելի լաւ էր դուրս գալիս: Նա, ինչպէս ասում են, սրտի խորքերէն էր երգում եւ երգելիս էլ լաց լինում: Արեգնազանը որդու ձայնից զարթեցաւ: Ուզում էր շուրջը հագնել եւ ձեռաց որդւոյն տեսնել իրան, բայց չը կարողացաւ: Մահի վրայ, կարծես, կապոտեցին նրան: Նա աչքերն ու ականջներն որդւոյն ննջարանի կողմն ուղղեց եւ տրամազեցիկ զմայլմամբ լսում էր մէկ ու ճարդաւակին աղիողորմ երգը:

Լարի ամեն մի թոթոթոց, երգի ամեն մի ելեւելք Լեւոնի մօրը թռցնում, տանում էին դէպի էրգոլում, դէպի ոսկերիչ խաչօյի տունը, դէպի Եսթերը...

Արեգնազան խանութի երեւակայութեան առաջ, մի առ մի, շարունակ էին այն տխուր անցքերն, որոնք, մի ժամանակ, տեղի ունեցան էրգոլում: Նա յիշեց այն օրը, երբ ոսկերչու տան վրայ յարձակում գործելով, Եսթերի ծամերից քաշ տուեց եւ տարաբաղդ օրիորդին գետին փռուեցրեց, աքացեց... լացարկեց... ամենադառն խօսքերով վիրաւորեց այն աղջկան, առանց որոյ, ինչպէս այժմ բաց աչքով տեսնում է Արեգնազան խանութը, իւր որդւոյն կենդան հալու մաշ լինում:

Արեգնազան խանութը յիշեց եւ այն րոպէն, երբ Լեւոնը, ի պաշտպանութիւն Եսթերին, ոտքով խփեց իրան, Արեգնազանին... ան, այդ սոսկալի րոպէի հետեւանքն է, ահա, որ իւր կաթողին եւ քամարող որդին շարունակ տուժում է, առեւտում, բայց բարկացում եւ վրէժխնդիր Աստուածը տակաւին չէ բաւականացել: Նստած տեղում, Արեգնազան խանութը

երորդ դար չը կայ, քանի որ դեռ եւս Ախալցխայի վերահսօս Հայկաթութեանը 19-երորդ դարի վերջումն էլ իրանց վրացի են անուանում: Կամ փռանգ եւ բողբոջական հայերի բազմութիւնը իրան լնացել է կոչում: Այս հանգամանքներն էլ մեզ ակամայ ստիպում է այն իմաստակներին, որոնք կրօնի անխտրութեան հարցը զարթեցնում են հայերի մէջ եւ նրան քարոզում: Համարել մի մի Նիկոլ կամ Պիղու, որոնք հայերին անտարբեր անելով դէպի իրանց եկեղեցիներ, նրանց հայութիւնից հեռացնում են, կոսմոպոլիտ նրանց անելով:

Վաղ հայերի կորուստը բռնի հաւատափոխութեամբ տեղի էր ունենում: Իսկ այժմ ի շնորհս կրօնի անխտրութեան գաղափարի — հետեւանք նոյնը կարող է լինել միայն միջոցներն են զանազան: Մեր կարծիքով ինչ որ երբեմն ճիշդութեան համար իրանց բռնի ուժով, նոյնն են եւ ներկայումս կրօնի անխտրութեան գաղափարի հետեւող իմաստակներն, որոնց ծափահարում են

մը՝ յանկարծ բոլոր մարմնով ցնցուեց, եւ այդ ցնցման վրայ նա ուշքի եկաւ: — Վախ, որդեակ, իմ այս կոտորելք ձեռքերովս եւ քո ստունը քանդեցի, — ասաց Լեւոնի մայրը եւ երկու ձեռքերով պնդ խփեց ծնկներին: Թորոս աղան դեռ եւս ննջում էր:

Արեգնազան խանութի վերջապէս, վեր կացաւ, շորերը հագաւ եւ դէպի որդուն սենեակը դիմեց: Այդ ժամանակ Լեւոնը փոխել էր իւրը եւ սկսել «Միղդափայտ» երգել, այն երգը, որ Լեւոնից ոչ նուազ սիրահար մարդու յօրինած ու երգածն է: Դու գիտես, անուշտ, որ այդ երգի ամեն մի տունը ձայնի 14 փոփոխութիւն, կամ ելեւելք ունի, ասաց ինձ ծերունին եւ, ինքը, ծերունին, կատարեալ երիտասարդի աշխուժութեամբ, սկսեց երգել: Երգի թէ խօսքերովը եւ թէ, մանաւանդ, աղէխարչ եղանակովը՝ ինձ վրայ մի անբացատրելի տխրութիւն տիրեց: Ես լսում էի եւ ինձ թուում էր, որ մօտս երգողը հենց ինքը Լեւոն Անթուանն է:

«Ավագըն էջիտիմ, նէրիս վարայիմ, Ուշիւք, ուշիւք գէղմէ գօնասան, բիւլբիւլ: Սէնին մեօհիւլէթին գեօնկիւմ է վընի ձիւլիւլիւմըն չէրի տօնասան, բիւլբիւլ:

Գէլլի, գէլլի ջիւլան եօմրիւմ, Բիւլբիւլ աղար, հանին գիւլ Բէշարս բիւլբիւլ, բիւլ, բիւլ — Գօնասարն գիւլ գօն, գօնմա թիւլինէ Էքսի դիւլման դօստ օլուր, սաքըն ինանմայ:

Սէն գէնղըն սարփայ վուր, խալլայ ինանմայ բիւլբիւլ: Գէլլի, գէլլի ջիւլան եօմրիւմ, Բիւլբիւլ աղար, հանին գիւլ:

մարդորս օտար քարոզիչները մեր մէջ, իրանց գործը թեթեւեղեղ համար: Մենք խորհուրդ կը տանք ամեն Հայ գործիչի, լինի նա եկեղեցական թէ աշխարհական, ձեռք բերել «Բռնի միութիւն» հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյ Հռոմիայ գիւղին, ուշիւք կարգալ ու համազօրով յառաջարանի այն խօսքերի մէջ թէ արտաքոյ Հայ լուսաւորչական եկեղեցւոյ չիք հայութիւն, գործել հայերիս մէջ այս գաղափարով, որ ամենազօրեղ գործին է մեր ազգայնութեան պահպանութեան համար:

ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

II

Ընդունում էք, որ դպրոց դեկավարողը մանկավարժ պէտք է լինի. դրամատուն կառավարողը — Ֆինանսիստ. հիւանդութիւններ բուժողը — օրէնսդէտ, զատ վարող եւ պաշտպանող — օրէնսդէտ, իրաւագէտ. տընտեսականութեամբ պարապող — տեսնագէտ. երաժշտութիւն ա-

Բէշարս բիւլբիւլ, բիւլ, բիւլ 2)

«Միղդափայտ» այս երգը եւ Լեւոնի մղկտոցը այնպիսի ներգործութիւն արին Արեգնազանի վրայ, որ չը կարողացաւ որդւոյն սենեակը մտնել եւ նրա ողորդութեան ու տողորմած մամը խանդարել, նորանոր անհանգիստներ պատճառելով սիրահարի դիւրազգաց սրտին: Ուստի Արեգնազանը որդու ննջարանի դռան առաջ կուշ եկաւ, զամակը պատին տուեց եւ որդու երգի ազդեցութեան տակ՝ կրկին անգամ թռւած գնաց մաքովը դէպի էրգոլումն ու դէպի օրիորդ Եսթերը...

Ոսկերիչ խաչօյի եւ Մարթաթեանի աղջիկը Արեգնազան խանութի աչքիցը այժմ չէր հեռանում: Նա նրան այժմ շատ սիրելի ու համակրելի էր:

— Բայց մենք թողնենք Արեգնազանին իւր երեւակայութեան եւ խղճի խաթման հետ, թողնենք, որ Լեւոն Անթուանը իւր սիրունուն երգէ, թողնենք զնախաժախ Թորոս աղային, որ մի՞թէ էլ ննջէ եւ գնանք տիկին Գլխուհու ետեւից: Ասանեան Մարկոս աղայի տունը:

Ի.

Արեւ նոր էր բացուել: Մարկոս ա-

2) Թառանջը լսեցի, ուր գնամ, սոխակ, Այդքան արագ մի գնալ, կնք, հոգեակ, Սոխակ, այ թռչանակ, հոգւոյս հատորիւ, Գարձիւր, քայլը ուղղիր դէպի հայրենիք, Աւագ, մատաղ կանաք սահեց, զընաց էլ չը կայ վարդ, թող միշտ սոխակն անէ լաց: Անտէր, անօգ թռչանակ, այդ, թող անէ լաց: Սոխակ, թէ թռչել, զընալ ես ուղում վարդին դիմիր, մի գնալ մէջ փշեղուն: Թէ հին ոստիւղ, թռչանակ, դարձաւ տեղիւմ, Հաւատ նրան մի ընծայել ամենեկին:

անդորը — ձայնագրագետ, ազգի կամ հասարակութեանը դուրս ելողը — կենցաղագետ և այլն և այլն: Ուսումնամասնը որ իւրաքանչիւր հիմնարկութիւն, ամեն մի գործ մի միայն այն ժամանակ կարող է լաւ ու արդիւնաւոր կերպով յառաջ գնալ երբ նրա մոտեցումը իւր գործին տեղն է, հմուտ, փորձաւոր և մասնագետ է:

— Ո՞վ է արդեօք հրապարակախօսը: Ի՞նչ բարեմասնութիւններ նա պիտի ունենայ:

— Հրապարակախօսը մի ամբողջ ազգի, մի հասարակութեան ներկայացուցիչը, նրա ձայնը խիղճը, նրա կենցաղակրթութեան և զարկ տուողն ու զարգացնողն է: Հետեւաբար նա պիտի ունենայ այն ամեն յատկութիւններն, զիտութիւնն ու պայմաններն, որով մի ազգ կարող է կենցաղակրթել: Հրապարակախօսը ուրեմն, պէտք է, այսպէս ասած, հանրագիտակ և բարեխիղճ անձնաւորութիւն լինի: Բայց Գիտութեան վարդապետը, Գիտութեան դարը անցած է: Այժմ հանրագիտութիւնը անբեկանալի է: Մի մարդ կարող է ամեն բան գիտենալ մասնաւոր որ այդ բանը, մեր ժամանակները:

*) Ծանօթ. Եւրոպացւոց կուլտուրայ բառը մենք այդպէս թարգմանած տեսնե՞ք պ. Հայրապ. Ղուկասեանցի՝ Գիտութեան «Հիմնական Գիտակութեան կանոններ» թարգմանութեանը մէջ:

մանակում ոչ թիւ ունի, ոչ էլ սահման:

— Ուրեմն հրապարակախօսը ո՞նց պէտք է խմբագրէ իւր թերթը:

— Ահա ոնց, նախ և առաջ նա ինքը ընդհանուր գիտութեան և զարգացման տէր պիտի լինի, զրաւան մարդ, բաւական ընդարձակ և ազնիւ նշանակութեամբ: Երկրորդ հրապարակախօսը իրան պիտի չըջապատէ աշխատակիցներով, օգնական ու թղթակցորդներով: Իւրաքանչիւր որ զրանցից լրագրական նիւթերի մի մի ճիւղ է ընտրում, այն որին ինքը հմուտ է և վարժ, որ իւր մասնագիտութիւնն է և, ձեռք ձեռքի տուած, խմբագրում են թերթը:

Այսպէս են անում լուսաւորեալ երկիրներում: Իսկ մեզանքում: — Մեզանքում այդ բանը ընդհանուր պէս չէ եղել և չը կայ: Պատճառը զիւրեմն մակարեւել: Հրապարակախօս դառնալու համար մեզանքում գրեթէ ոչ ոք յատկապէս չէ պատրաստուել, ոչ էլ յարմարաւոր աշխատակցող ու օգնականներով իւր թերթը չըջապատել: Ինչ ասել կ'ուզեն որ այս վերջին հանգամանքն էլ իւր իրաւացի հիմունքներն ունի: Բայց վերջապէս մենք ամենքս հօ ընդունում ենք, որ ինչպէս ամեն մի ձեռնարկութեան, այսպէս և հրապարակախօսութեան մէջ լաւ արդիւնաւէտ — կատարեալն է: Բնորոշում ենք, որ ինչպէս շատ բանեւորում նմանապէս և այս կէտում:

գոնեա, շատ բարի կ'լինէ, եւ ոչ մի պատճառ չունիմ, իմ բացակայութեամբ, բազմապատկել և՛ սկիստը մտմտութեամբ...

— Սկիստը ինքն էլ ստակի, ու իրան մտմտութեան էլ — դուտեր խօսքը ընդհատեց մայրը:

— Գու ոչ միայն անպատշաճ, այլ և անարդար կերպով եւ խօսում, մայր, եւ քեզ ասում եմ, որ սկիստը ոչնչով յանցաւոր չէ դէպի ձեզ և դէպի ինձ:

— Ա՞նց թէ յանցաւոր չէ: Եթէ նա լաւ ու խելօք կ'լինէր, պիտի զրտենար, որ իւր դասակը արժանի չէ օրէնաւոր մարդկանց ազնկայ հետ պատկուելու... Թող նա... — Ս, մայրիկ, ի դուր այդ քան նըրբութիւններն մէջն ևս մանուկ դու: Եթէ այդ կէտում դու իմ սկիստըն եւ մեղադրում, կարծեմ, եւ ինքս էլ իրաւունք ունիմ քեզ մեղադրել...

— Ի՞նչ, եւ ինչով եմ մեղադրում: — Շատ բաներով...

— Սրան մտիկ, սրան... «Բէսթ էն էդէն»

չըբմիշ, զարեւոյնայ թիւքիւրեօր 3), Նա էր զարեւոյնում, եւ Աստուծոյ խօսքը իմանայի թէ Լեւոն Անթուանը անպիտան աղայ է, թէ նա զինեղ ունի, թէ վերջապէս սիրականներ է ունեցել: Զօ մատիցս հոտ չէի քաշել, Զօ Հոգին սուրբ վերելից ինձ չէր թելադրել... մեղայ, Տէր, մեղայ, եւ անտուժում եմ, Գիտուն, որ դու խելքիդ շատ եւս դու տալիս եւ դու ինքդ խելքի կարօտ, քեզանից մեծերին խելք սովորացնել եւ ուղղում, — այն էլ ումօրդ, հայհայհայ...

— Մայր, դու ծիծաղում ես, բայց իմ ասածը ճիշդ է: Գիտէ Աստուած, զիտին իմ չորս տարեկան քանած տաւապանքներս, որ թէ հայրս, և թէ մայրս, անող դու, շատ յանցաւոր էք...

— Հայրդ էլ, աղջիկ, հայրդ էլ է յանցաւոր...

*) Առած. չազանակիցը դուրս է եկել և նրա կենպիւր վրայ թքում:

լուսաւորեալ ազգերը՝ մեզ օրինակ պէտք է վերցնենք: Այսինքն մենք ևս պէտք է աշխատենք կատարեալ լինել: Մեր կատարելութեամբ գործը կը կատարելագործուի, վերջնովս էլ — հասարակութիւնը կը կենցաղակրթի:

— Ի՞նչ անենք.

— Նախ քան այդ հարցին պատասխանելը դեռ մէկ տեսնենք թէ ի՞նչ ենք անում մինչեւ համայն:

Յ. Գ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՒԵՐ:

1884 ամի օգոստոսի 12-ին ներքոյ ստորագրեալ ուսուցիչքս ժողովելով «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրատանը՝ միմեանց հետ խորհրդակցեցանք, թէ ի՞նչ պէտք է արած «Վարժարան» ամսագրի դադարումը իսպախելու համար: Բաւական խորհրդակցելուց զինքն՝ որոշեցինք 1) մեզանից իւրաքանչիւր որ հէնց այժմեանից բաժանորդ գրուել «Վարժարանին». 2) մեր պաշտօնատեղիքը հասնե-

— Այո, մայր, հայրս էլ, դու էլ, աշխատելու բոլոր ծնողքներդ էլ մահացող յանցաւորներ էք ձեր դասակաց մարդու տարւումը, — ասաց տիկին Վե՛րժիկին և սրտմտած՝ տեղիցը վեր կատարեալ:

Նարդոս խանումը, դուտեր խօսքերի և շարժմանց վրայ, կարծես, կարկամեցաւ: Հոգեկան զայրոյթից Գիտունին մօր կերպարանքը գոյն էր տալիս և գոյն առնում:

— Եթէ որ... ամենախելօք աղջիկս, եթէ ես... քո կարծիքով... եւ և հայրդ... Եթէ որ մեր քաղաքի բոլոր ծնողքները... վերջապէս, Գիտուն ջան, դու հօ այսօր ցնդած չես, խելքիդ փորձանք հօ բերած չես... աղջիկս, ինչքեւ ես ասում: Այս խօսքերի վրայ Նարդոս խանումը դէպի աղջիկը մօտեցաւ: Գիտունին խօսքերը նա չէր կարող ըմբռնել ու մարտել: Նրա մայրական գորովն ու պատուաւորութիւնը վերին աստիճանի արժանութեամբ էին:

Տիկին Գիտունին խօսքի ձեր շուտուց: Նա կարեկցաբար բռնեց մօր ձեռքը և ասաց.

— Այսպէս թէ այնպէս, մայր, այժմեան մեր վիճելը աւելորդ է, և մի անդամայն ապարդիւն: Գուք էք յանցաւոր թէ ես, — դա այժմ մի և նոյն է: Խաչը դրած է իմ վզին, և ես պէտք է տանեմ, պէտք է քաշեմ... Եւ կը տանեմ: Ուստի, մայր, մնաս բարով: Նրա խօսքին ասած, թող զայն ինձ ճանապարհ ձգէ:

Տիկին Գիտունին պատրաստուեցաւ հօրանց տանից դուրս գալ: Մայրը բռնեց նրան և չէր ուզում բաց թողնել: Նարդոս խանումը միշտ այն կարծիքի էր, որ Լեւոնին և Արեգիւնային պէտք է պատժել: Եւ պատժել, իւր աղջիկը նըրանց կշտից, եթէ ոչ բոլորովին, գէթ մի քանի ամիսով, մի երկու տարով, հեռացնելով...

լիս՝ ընկերաբար համոզել մեր ընկերներին և ծանօթներին նոյնպէս բաժանորդ գրուել յիշեալ թերթին. 3) իւրաքանչիւրը մեզանից, որքան ձեռնհաս է, աշխատակցի «Վարժարանին» ուսումնարանի կենսանքի վերաբերութեամբ, թէկուզ, հում նիւթեր մատակարարելով, մանկական և ժողովրդական յարմարաւոր խաղերի նկարագիրը անելով և այլն:

Հրաւիրում ենք մեր միւս պաշտօնակիցներին, որոնք գըտնվում են կամ թիֆլիսում, կամ գաւառներում, իրանց հերթում ևս որ և է եղանակ գտնեն «Վարժարանի» գոյութիւնը ապահովելու համար: Կը բարեհաճե՞ն նրանք մեր օրինակին հետեւել, կամ գուցէ այլ իմն եղանակ կը գըտնեն, — դա իրանց գործն է և իրաւունքը: Մեզ համար քաղցրը կը լինի յուսալ, եթէ որ Հայ ուսուցիչներս կարող լինինք, այս կամ այն կերպով, ապահովել «Վարժարանը»:

— Որպէս զի, հայրիկ, հարցրի եւ ծերունուն, Նա պատասխանեց.

— Որպէս զի — այսպէս էր համոզուած Նարդոս խանումը — Լեւոն Անթուանը, երկար ժամանակ, առանց կնիք մտալով, վերջապէս, մի օր գնահատե՞ նրան:

Մեր Նարդոսները իրանց համամասնում են այն ջրամանի հետ, որով միայն կարելի է ջուր խմել և ծարանը ու պապակը անցկացնել... Եւ այն ջուրի, զգեստի հետ, որ մարդիկ պէտք է որ անպատճառ հագնեն, թէպէտ և այդ ջուրն նրանք հաւանելիս չը լինին էլ, եւ այն բաժն ու բաղմոցներին հետ, որոց վրայ մարդիկ պէտք է որ բազմին, նըրան, պտուղին ու հանգստանան... Արդ՝ Լեւոն Անթուանը, ինչ էլ որ լինի, այժմ ջուր խմել ուզում է, հօ — ջուր հագնել ուզում է, նստել, բազմել, պտուղի էլի, հօ նա ուզում է... Ուրեմն նրան էլ, ինչպէս և ամեն տղամարդու, անշուշտ հարկաւոր են և՛ ջրաման, և՛ ջուր, և բարձր ու բազմոց: Իսկ այդ ամեն առարկաներին վաճառքի տրուելը — Գիտունին ինքն էր...

— Ասածներդ ցուալի՝ ճշմարտութիւններ են, ծերունի.

— Յաւալի են թէ ոչ, եւ չը գիտեմ, բարեկամ, միայն ես գիտեմ, որ այս այսպէս է: Բայց շարունակեմք:

Նարդոս խանումը աղջկայ ձեռքիցը պլնը բռնած, ինչպէս ասացի, բայց չէր թողնում Տիկին Գիտունին էլ, ընդհակառակը, անպատճառ տուն գնալ էր ուղում: Նա դարձաւ դէպի մայրը և մեղմ ու համոզիչ ձայնով ասում էր.

— Ինչքան էլ որ այդեւս, մայր, այնու ամենայնիւ ես պէտք է գնամ:

— Չէ, չը պէտք է գնաս, եւ քեզ չեմ թողնում — Նարդոսը ձայնին և դիրքին սպառնացող ձեռքով.

— Եւ անպատճառ գնալ եմ ուղում: Գնալ լաւ է, մայր, հաւատաւ դու ինձ, Գիթ այս մէկ կէտումը յարգիր դու իմ

Այդ պատճառաւ էլ, մեր այս ընկերական — եղբայրական հրաւերը՝ թող յանդգնութիւն չը համարուի մեր կողմից դէպի մեր հեռաւոր պաշտօնակիցները:

Խնդրում ենք «Մեղուի» խմբագրութիւնից մեր այս ուրուամը և հրաւերը տպել իւր էջերում, իսկ միւս թերթերին — արտատպել:

Կարող երկուս դպրոցաց տնուէ՝
Գրիգորիս Կրկնեանց.
Բագրատ Մարգարիտ. ընկերութեան երկուս դպրոցաց տնուէ՝
Աստուածատուր Գալստեանց.
Թիֆլիսի Նիկողայի վսկու քաղաքային դպրոցի ուսուցիչ՝
Յակովբ Զմարտեանց.
Նիֆի դպրոցի ուսուցիչ՝
Ուսուցիչ՝ Վարդան Եղիազարեանց.
Բագրատ Այվազեանց.
Գրիգոր Խօջանիսեանց.
Ա. Մատինեանց.
Սղոպի երկուս ուսուցիչ, ուսուցիչ՝
Զ. Ումիկեանց.
Ուսուցիչ՝
Ս. Ամիրաղեանց.
Գր. Մատինեանց.
Պ. Սահակեան.
Ա. Սպարապետեան.
Յ. Գեղամեանց.

դէնց ծառաները տան կովերն են ջրում, դուռ ու բակ և արտու ու մարաք աւելում:

Մարանը իւր թոնրին պատրաստութիւններն է տեսնում: Պատաւը այսօր ժանկուտեղ էր: Երեսիցը, կարծես, թոյն լինէր կաթում: Եւ այդ նրա համար, որ նա ուխտագրութ էր գտնուել և այդպիսով ոչ միայն իւր խղճին դէմ մեղանշել, այլ նաեւ Լեւոնի ու Գիտունին զբոսաւորութիւնքը աւելի արժարժել: Մարդու աղան, ըստ սովորութեան, վաղ առաւօտեան թէյը խմած եկելուցից, և այն տեղից էլ, փողոց էր գնացել: Փոքրիկ Աղջակը փափուկ անկողնի մէջ կողորուած, պատանեկական անմեղութեամբ, ննջում էր: Նարդոս խանումը և իւր դուստրը, Գիտունին, շորերը հագնել ծալարանում, հեշտայեռի շուրջ նստած են: Թէյի լիք բաժակները թէ և դրած է նրանց առաջ, սակայն ոչ ոք չէ խըմում: Մայրը շատ զայրացած է թուում, իսկ դուստրը՝ վշտաբեկ, տխուր ու տըրտում:

— Վերջապէս հիմի ինչ ես ասում, ի վերջոյ հարցնեց մայրը:

— Այն՝ ինչ որ ասացի — պատասխանեց դուստրը: Եւ, մայրիկ, քո առաջարկութեան մէջ ոչ մի օգտակար կողմ չեմ տեսնում: Հրաժարուելով մեր տուն գնալուց, թէկուզ առ ժամանակ, եւ Լեւոնի աւելի կը վշտացնեմ և անշուշտ նորանոր անկարգութեանց պատճառ կը դառնամ: Սկիստը, որ առանց այն էլ ամեն օր տանջվում է, աւելի պէտք է ծծկուի: Բայց ինչի՞ Նա, ինձ համար

Արեւն-բերան ամբողջ միշտ հեռու կաց,
Ապա թէ ոչ արեւակի զու կը լինի անկասկած:

Աւանդ, մատաղ կեանքս սահեց, գնաց եւ չը կայ վարդ, թող միշտ տղական անէ լաց

Անտէր, անօդ թռչանք, այն, թող անէ լաց:

սեպական կարծիքս: Ո՞չ ապաքէն սկիտայրս էլ այստեղ չէ: Մի քանի օրից նա վերադառնալու է: Եւ կը վշտանայ, երբ լսէ, որ ես թողել եմ իմ մարդուն, իմ սկիստը, իմ տունը, վերջապէս... Եւ իմ խաչ... Եւ տիկին Գիտունին լալ-խորտեցաւ: Բայց էլի բռնեց արտասուքները:

Նարդոսը շարունակ դիմադրում էր: Նա տեսաւ, որ սպառնալիքներով եւ չը կարողացաւ դուտեր մատուցութիւնը փոխել: Ուստի այժմ մի ալ զէնքի դիմեց: Գա հեղեղութիւնն ու երկրժանքն էր:

— Եթէ դու, սրբեակ, իմ և հօրդ պատիւը նոյն իսկ քո սեպական հանգստութիւնը քո զինեղ մարդուն և ծրուկիման սկիստից եւս գտնում եթէ դու, իմ համեստօրինս աղջիկս, մի քանի շաբաթ, մի քանի ամիս չես կարող առանց մարդու մնալ...

— Ամօթ է, մայր, մեծ կնիկ ես, հօրապատ մայրս ես, և տես թէ ինչ տեղ անկարկութիւններ ես անում...

— Եթէ դու ինձ քեզ մայր ընդունէիր, խորհուրդս վը լսելի, բայց — եւ հօ քեզանից վախենալու, քեզ չողորթութիւն չեմ — բայց եւ լաւ տեսնում, որ, այն, քեզ համար զինեղ մարդդ աւելի արժէ, քան ծնողքդ, քան ամեն բան: Այդ տեսակ կրթութիւնը դու երբ և որտեղից, ստացար, Գիտուն:

— Քեզանից, մայր, այս տանից և այս ծնողքից:

— Յիմար, անպատկառ:

— Մնաս բարով, սիրելի և գորովա գութ մայր: Տիկին Գիտունին այլ եւ չը կարողացաւ արտասուքները բռնել, որոնք ուղտն, ուղտն թափվում էին մահահասակ կնիք աչքերիցը: Նարդոսի գոլթը շարժեցաւ: Նա էլ լաց եղաւ:

Մայր ու աղջիկ, մեքենայաբար, մէկ-մէկ գրկեցին և լալիս ու հեծկտում էին: Ո՞ր գիտէ թէ ինչ տարբեր զգացմունքներով լցուած էին, այդ րոպէին,

Կ. Պ Օ Լ Ի Ս

23 յուլիս.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Անցեալներս Սօսիւն պատմելով Ներսէս Պատրիարքի գործունէութիւնը զարմանք կը յայտնէր միանգամայն թէ ինչպէս կարելի էր այնչափ գործունէութեան հետ հիւանդ լինել: Զեր կողմի լրագիր մը առիթ առնելով այս խօսքերը պօքեցեաց դէմ իւր թշնամական հոգին անգամ մը նաև յայտնելու համար պօքեցիք հակասական են ըսելով յօդուած մը կը գրէ: Մեզի համար նոր չէ այդ լրագրին լեզուն ինչպէս իւր թղթակցիւր իրեն պատասխանելու համար չենք ուզեր գրել այլ ճշմարտութիւնը յայտնել պարզ կը համարենք:

Իրօք Ներսէս Պատրիարք վերջերս դարձեալ հարցաքննութեանց գտնուեցաւ շատ անգամ Սատրապի գնացի վերջերս անգամ մը նաև սուլթանին երթալ պարտաւորեցաւ որովհետև կանչուեց էր և այս իւր երթեկութեամբ կրցաւ յաջողիկ թողութիւն առնուլ երբ որով ըստարկելու համար ինչպէս օրագիրք իմացուցեր էին: Բայց այս իւր գործունէութեամբ հիմա որ անկողին ինկաւ և չորս հինգ բժիշկք խորհրդակցութեամբ զենք կը դարձանէն, իւր շնորհալի համար զգացած ներութիւնը իւր սրտին բարախիւնքը կը վերաբերեն այն շաբարի հիւանդութեան որ եօթը ութը տարիներէ ի վեր զենք կը տրակարացնէ և կը հարկւնէ: Ահա այն կարծուած հակասութիւնը որ ջիւ-

ղերու զրդուութեան գործունէութիւն կուտայ հիւանդին և որով ժիշկները կը մեկնեն: Եւ հիմա Ներսէս Պատրիարքի ամենաջերմ կողմնակիցը նա և կը յուսահատին նոքայ որ իւր կամեց դէմ զենք կաթողէնս կուգէին տեսնել և նոքայ որ այս առթիւ զենք կուգէին հեռացնել: Իսկ հայ ժողովրդեան աւանդաբան մասը իւր պատրիարքին այս հիւանդութեան ծանրանալուն վրայ շատ ցաւ և տկարութիւն կ'իմանայ վառ զի Ներսէս իւր աչքին շատ բարձր մարդ է և ամեն անարգ հարուածներու անթափանց:

Կարելի չէ նա և լուրջութեամբ անցնել առաքելի և ազնիւ անձի մը մահուան վրայ որ մեծ ծառայութիւններ ըրած էր ազգին աղջկանց դատարարութեան համար դպրոց մը հիմնելով և անանկ ազգայնաց և դաւաճացի պանդուխտ գործաւորաց հիւանդութեանց դարման հոգալով: Տիկին Նազը Ահաճեան ասկից քսան և հինգ տարի առաջ և աւելի հիմնեց Հոփսիմեանց աղջկանց վարժարանը յօրթագիւղ գըլուէն կանգնելով իւր նման հոգալով քանի մը տիկնանց և այդ վարժարանը մինչ այսօր ոչ միայն կը շարունակէ այլ նա և անկից կը աշակերտուի: Նոյն հիմնարկուաց հոգին ժառանգելով Գալոցասէր Հայուհեաց անուամբ ընկերութիւն մը հիմնեցին չքաւոր աղջկանց դատարարութիւնը և յուրարկելով հայրենի երկիրը: Այս վերջին տարիներս այս դպրոցատեղաց ընկերութեան տիկնայք և օրիորդք զարկին Վա-

հան իւրեանց աստիճան ընտրել էին և նա թէպէտ եօթնամեակ տարիներու հասած, չէր մերժած այս խնդիրը: Այս տղերքը զորով չէ կըրնայ մոռնալ այդ տիկնոջ գործունէութիւնը և հաստատաւորութիւնը որ երբ վարժարանի հոգաբարձութեամբ կ'ըլլարէր ինչ ճշգրտութիւն և ինչ բարեկարգութիւն կը պահպանէր և կուտար պահպանել: Վարժուհիք դաստաւը, աշակերտուհիք գիտէին թէ ինչ հսկող աչք մը կայ վրանին: Նոյն էր նաև անտէր հիւանդաց համար անքուն պահպանել, կ'երթար նոյն անակները կը միթարէր՝ կը բաժնէր էր և կարեւոր կը հայլ հայլ թեր, նոյն աղիտութեան և նախապաշարմանց դէմ կը խօսէր և կը համարէր: Բարի և բարեգործ կեանք վարելով բարի և երջանիկ մահուամբ ալ վախճանեցաւ հետքը տանելով ոչ միայն իւր ազնիւ զաւակաց վշտազին զգացմունքը այլ ամբողջ ժողովրդեան մը ցաւալից համակրանքը: Յուրարկաւորութեան հանդէսը համեստ էր և վայելուչ, աղջկանց ուսումնարանը փառաւոր պատկերով զարդարեցին գաղաղը իսկ մօր արժանի ժառանգք աւելի փառաւոր պատկ մը հիւսնեցին իւր յիշատակին 50 ոսկի յուրարկելով ազգային հիւանդանոց:

Կ'մանանք որ «Մշակ» օրագիրը կը դադարի առ ժամանակեայ կերպիւ այս զմեզ չը դարմանցնէր ինչպէս անցեալ շաբաթ գրած էինք, մի և նոյն դիպուածը պատահեցաւ «Մասիս»-ի որ «Մշակ» պէս երեկուան

չէր այլ նորա երեք հասակը ունէր: Միայն չէր կրնար առանց խորհրդածութեան անցնել, երբ կը մտաբերենք թէ այդ օրագիր երբեք իւր հակառակորդ թերթին մահուան փափագ կը յայտնէր, այդպիսի պղծիկ հոգի մամուլի մէջ պէտք չէ մնայ, եթէ օրագրութիւնը լուսաւորութեան և բարոյականութեան գործիք չէ և եթէ նա չար օրինակ է ազգին մէջ, եթէ նա նախանձ և հեռ կը սերմանէ ժողովրդեան մէջ, լաւ է որ վերնայ մշտնդէն և զայլակողութիւնն ալ իրեն հետ գնայ ի կորուստ:

Ինչ կատարեցութիւն է՞ր ուրեմն, որ լուրջ անձինք ոմանք կը խաղային ձեր կողմը, երբ վեց հարիւր հազար ուսուրի ժողովուրդ կ'ընդունէր ձեր հոգաբարձութիւնը և զայլակողութիւնն ալ իրեն հետ: Մեզ այդ շատ դժուարահաստատել երեւցաւ, երբ կ'իմանանք որ ամեն տեղ վախճանեցութիւնն են ժողովրդականաց համար, որոնց մէջ, ինչպէս յայտնի է, մարդորանք շատ կան: Երբ է, Սրբազան Սինօղի կարգադրութիւնն քահանայք չը ձեռնադրելու համար, մահաւանդ, անարժաններին, շատ զեղեցիկ է, միայն ամեն կանոն և բացառութիւն պիտի ունենայ, որ յարմար կը լինէր ներկայումս Դամասկոս վիճակի վերաբերութիւնը:

Սօսիւն.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Փօթից մեզ հաղորդում են, որ տեղւոյն Անգլիացի հիւպատոսի շնորհիւ Թիֆլիսից Առաքել քահանայ Ազիզեանցը ընդունուել է օրինաւոր ժառանգ Վախճանի Սողոմոն Պապին: Պ. հիւպատոսի ատուքով յիշեալ քահանային հասանելի գումարի քանակութիւնը 4.000,000 ու. աւելի է:

Դամասկոսի մեր թղթակիցը գրում է, որ այնտեղ քահանայի սով է. մահաւանդ դիւղերում: Մի կողմ թողնելով այն, որ արժանաւոր, Աստուծոյ խօսքը քարոզող քահանայ չը կայ. պակաս են և՛ այնպիսիք, որոնք կարող լինէին գէթ եկեղեցական ծէսերը կատարել: Մի քանի միանանցից բաւական հեռու գիւղեր մի քահանայ ունին, որ անկարող է ամեն տեղ իւր ժամանակին հասնել: Այդ պատճառով էլ անհաղորդ մեռնել, առանց քահանայի թաղվել և այլն սովորական երեւոյթներ են Դամասկոս վիճակի գիւղերում, բայց այս ամենը գայթակղութիւն են ժողովրդականաց համար, որոնց մէջ, ինչպէս յայտնի է, մարդորանք շատ կան: Երբ է, Սրբազան Սինօղի կարգադրութիւնն քահանայք չը ձեռնադրելու համար, մահաւանդ, անարժաններին, շատ զեղեցիկ է, միայն ամեն կանոն և՛ բացառութիւն պիտի ունենայ, որ յարմար կը լինէր ներկայումս Դամասկոս վիճակի վերաբերութիւնը:

Պ. ** Հին-Նախնականից գրում է, որ այնտեղի դպրոցները տարեկան մօտ 1800 ռ. ծախք ունին, որոնք գոյանում են աշակերտաց թոշակներից, ուստատեղիներից և այլն. իսկ «Մեղու» № 59-ում հրատարակած նամակի խօսքերը, թէ պ-

Նարդուի ու իւր ազգիայ սրտերը: Վերջապէս տիկին Գլխուհին յետ կանգնեց և զնայ էլլամբ ծածկելու: Մայրը կրկին ընդգիծանալ սկսեց: Նա ասաւ.

— Աղջիկս, Գլխուհի ջան, սիրեկան, Աղամն էլ խաբարու, դրախտիցն ընկաւ... — Եւ նրան խորովր, մայր, մի Նապ էր...

— Այո, բայց և այնպէս ամեն բանին էլ ճանապարհը կայ աշխարհումս, որ դեռակ: Գրա համար հարկաւոր է, որ մարդիկ փոքր ինչ իրանց բանականութեան ճանխն լինեն...

— Բանականութեան, որ մինչ այս հասակը ևս դեռ տեսած չեմ: Իսկ այժմ, երբ փորձը, թէ ձեզ և թէ ինձ, փոքր ինչ ցոյց է տուել բանականութեան ճանապարհը, — աւանդ, արդէն ուշ է, մայրիկ, ուշ, հակամարտ եւ: Այժմ բաժանը լեցնելու ժամանակը չէ: Նա արդէն լինէ է, պէտք է միմիայն խմել, դատարկել... Յիշում ես, մայր, այն օրերը, երբ դեռ ինամանք էր գործուրդը նոր էին եկել, երբ փեսայացուք իմ երեսին անգամ նայել չէր ուզում, երբ նա խմում, հարբուում էր, թէ ձեզ և թէ ինձ թափանցիկ ակնարկութիւններով վիրաւորում էր. երբ իմ քոյրերս իմ հրաւերները միանգամայն արհամարհելով ոտը մեր տան չեմքից ներս անգամ զննել չէր ուզում, երբ... Այդ ժամանակներում Լեւոնը, մայրիկ, տա-կաւին քո փեսան չէր, այլ փեսայացու: Նա դեռ իմ ամուսինը չէր, այլ պիտի լինէր: Գեւ մեր սրբազանք մեր սուրբ պատկի խորհուրդը կատարած չէր, և անհաւատկաւ իւր բերանից հանած չէր այն սքանչելի և տակաւի վճիռը թէ՛ «Պր Աստուած զուգեաց, մարդ մի մեկ-

նեցէ»:

— Խեղճ, ես հօ ջնմ պահանջում, որ դու քո մարդուց բաժնաւոր Մեղան, Տէր, մեղան, Այդ լոնց կարելի է: Սպասել կարելի է միթէ լուծել: Այդ բանը, որդեակ, մօքից անցկացնելն անգամ մահացու մեղք է: Այլ ևս քեզ ասում եմ, Գլխուհի ջան, դու առ ժամանակ մարդուց երեսի վրայ թող թող նա առ ժամանակ առանց քեզ մնայ, թող նա «ճան» ասէ և «ճան» չը լսէ, և դու կը տեսնես, որ նա շատ շուտ կը փոխուի: Անձին լինելը էլ կը մոռանայ, հարեցողութեան էլ վերջ կուտայ և... — Եւ իւր լսելով, մայր, ինձ միշտ կը միթիւրէ... Միտաւ բարով: Մայր.

— Եսթեր է, ինչ մեղքաց պատիժ է՝ չը գլխում, միայն ևս փորձով իմանում եմ, որ աղամարդիկ, առ հասարակ, միշտ դանդաղում են այն կերպիւրից, որ յաճախ են ուտում...

— Մայր, էլի դու քո յիմարութիւններն ես սկսում ես քեզ ասում եմ, միտանաւ բարով... Մտաւային հետա տալու ես թէ ոչ: Բայց իմացած կենաւ, որ եթէ այս խնդիրն էլ մերժուի, կը վերկենամ և առանց ծառայի կը գնամ: Եւ մանկահասակ կ'ընդ գէպի դուռը շտուկուեցաւ: Մայրը ետքիցը գնաց և նորից խնդրում, աղաչում էր անաւ իւր խորհրդին:

— Գեղ ասում եմ, թիչ տուր ինձ, մայր: Վերջապէս այդուհետեւ ինձ ատելի են այդ տեսակ գոթ ու գորովը... Տիկին Գլխուհին մօրը յետ մղեց, ծածկեց էլլամբ և հօրանց տանից դուրս գնաց:

Չարացած ու դարձացած մայրը՝ հրեմայեց ծառային, որ փոքրիկ խանութին ճամբու դէն: Իսկ ինքը մտաւ իւր

սենեակը և, ինչպէս ասում են, Յուդայի նման բարձի վրայ վէր ընկած սկսաւ լալ ու հեծկտալ:

ՄԱ.

Մինչև ծառայի հասնելը տիկին Գլխուհին արդէն փաղոց դուրս էր եկել և շտապ շտապ գնում էր: Ընթացքին նա թորոտ աղին պատահեց: Վերջինս յայտնեց ճանապարհ, որ Լեւոնը գիւղեր շատ խաղաղ և հանգիստ կերպով էր անցկացրած: Թէ նա այժմ բոլորովին սթափած է և մօր հետ միասին նստած՝ աշուշ անուշ խօսում են, սպասելով Գլխուհին վերադարձին:

Այս ասելուց յետոյ, թորոտ աղան կամեցաւ ընկերանալ ընտուն, բայց օտ չ'ընդունեց: Նրանք հեռացան միմեանցից: Գլխուհու պահանջովը՝ Աղան ևսնցի տանու ծառան ևս կէս ճանապարհից յետ դարձաւ: Եւ մանկահասակ կ'ընդ, այս առաջին անգամ, մէն միմեակ հօրանց տանից իրանց տուն գնաց:

Բարեկարգաբար փողոցում անցուղարձ անողներն չը կային, որ մանկահասակ կ'ընդ համար մէն միմեակ տուն յետ դեռնալն ևս նորանոր խօսակցութեան ու բարձրանաց տեղիք տար:

Տիկին Գլխուհին իրանց տուն հասաւ: Արեգնազանն ու Լեւոնը մէկգլխով կը լսէին նստած՝ խօսում էին:

Այնպիսի անուշ հարս գնացած օրերը ի վերջոյ առաջին անգամն էր, որ Գլխուհին այդպիսի տեսարանի հանդիպեցաւ: Բայց, զարմանալի լան, փոխանակ ուրախանալու, փոխանակ միթարուելու և այդ բարեկարգ անակից օգուտ քաղելու, մանկահասակ կ'ընդ, այս անգամ, ինչպէս ասում են, փաղաճ լինը շուտ տուեց: Նա Լեւոնի կողքին դըրած տեսաւ նրա բուրբալներ, Գեւանի

նման վրայ վազեց և պատն ի վեր խըփելով ջարդ ու փշուր արաւ գիւնդիկի սիրոյ առարկային:

Արեգնազանն էլ Լեւոնն էլ զարմացած մնացին: Գլխուհին վրայ ծածկուցը՝ էլլամբ՝ ուղէն շարունակ և վազեց մարդու գիւղին ընկաւ:

— Գնանք, Լեւոն ջան, գնանք քո վախճանը՝ դրական ձայնով ասում էր Գլխուհին: Այնտեղ, քո տան մէջ եսքեզ համար քոյր կը լինեմ... քո տանու աղաքիւրը կը լինեմ... Արտասուքները գոռով գոռով Գլխուհին այտերից վայր թափեցան: Գլխուհին ծառուցանալ Նա զուրեցաւ, վայր ընկաւ: Մայր ու որդի վերցրին: Գլխուհին, Գլխուհին, խեղք թուրեց յանկարծ: Նա ապուշ ապուշ մէկ մարդուն էր նայում, մէկ սկեսորջը: Արեգնազանը ինքը քիչ էր մնում թէ գոթի Մուս ու փուս նա իւր ձեռքերն էր արթնում և չրթուցները խածոտում: Լեւոնը, համեմատաբար, լաւ էր: Նա իւր ձեռքը կ'ընդ վրով փաթկեց, կարկեցական մի համարյոյ տուեց նրա բորբոք թշնմին և սկսեց չըչըչել ու գուրգուրացնել նրան: Տիկին Գլխուհին երեսը ծաղր եկաւ: Նա շուտ շուտ մպտում էր և, իւր հերթում, նոյնպէս չըչըչում էր մարդուն, դրստում նրա գլխի մազերը, համարում ճակատը, երեսը:

— Այսօր ենք գնաւ թէ վաղը ի վերջոյ հարցեց Գլխուհին:

— Ոչ այսօր, և ոչ էլ վաղը, Գլխուհի ջան, փաղաքշտան պատասխանեց Լեւոնը: Ես ուրիշ վաթան չունիմ, բայց ի Ախալքալաքից, Մեքը քեզ հետ կը մը: Նանք այստեղ: Ես այսուհետեւ էլ երբեք խմելու չեմ: Գեղ հետ միասին երբեմն կը գնանք վանքի ձորը, այնտեղ լաւաւ ծաղիկներ կը ժողովնը, կանանչ խո-

տերի վրայ կը նստանանք...

— Ես էլ մէջ մտաւ Արեգնազանը՝ ձեզ համար դաշտի միջին կերակուր կը պատրաստեմ: Միշտ եփուիլը ձորից կը բարձրանանք դէպի սուրբ Ստեփանոս, այնտեղ ուխտ կանենք, յետոյ...

— Եսթերին էլ հետեւ կը վերցնենք, այնպէս չէ, խանութ մայրիկ, հարցեց Գլխուհին ծիծաղելով: Արեգնազանը ալ ընդ ալըլ եղած, թողեց ջահիշերին և, կիսաձալ ծնգնելով, դուրս գնաց: Արեգնազանի համար հարկին խեղացնուրիւ արդէն պարզ էր: Մօր կարծիքին էր և ինքը Լեւոնը, բայց ոչ հաստատապէս:

Երիտասարդը աւելի այն մտքի էր, որ իւր կ'ընդ նախընթաց երեկոյն իւր բերնից լսած «Եսթեր» անունիցը վիրաւորուել է, և այժմ իւր վիրաւորանքը գընկու համար՝ հեղանական ձև է տալիս իւր խօսքերին ու երեսի շարժումներին: Բայց երկուսի մէջ, մի քանի րոպէ ևս, տեղի ունեցած խօսակցութիւնը, Գլխուհու տարօրինակ ձև ու շարժումները, Եսթեր անուան վրա նրա արտայայտած հոգեկան դժբախտութիւնը, — վերջի վերջոյ Լեւոնն էլ համոզեցին, որ իւր կ'ընդ գոթուել է:

— Եւ, յիշաւ, տիկին Գլխուհին խեղք թուրեց էր, ասաց ինձ ծերունին և սրտի խորքերից մի ան քաշելով, մի քանի րոպէ լուցի:

(Կը շարունակվի)

հոգաբարձուները՝ չեն խնայում իրանց վերջին կողմերը դպրոցներին համար, ճանապարհները չեն զբաղեցնում, որովհետև և մեծ. հոգաբարձուք տալիս են այն, ինչ որ ամեն ոք, բացի մեծ, պ. Ազատ-հանցից, որ յիրարի չատ չերմուսանող է դէպի դպրոցները: Քննութիւններն էլ տարօրինակ էին. ուրիշներին հարցեր առաջարկելու թույլտուութիւն չ'եղաւ, այլ ամեն աշակերտ պատասխանում էր իւր անգիր արածը:

— Դո՛ւք հարցողում է, որ բերքն այս տարի չատ առատ է. բացի խաղողից, որ մայիսի ցրտերից չ'նստվել է:

Գործից պ. Լեւոնէն գրում է, որ գործակատար հայր Գ. Արշ. տնկանոնութիւնը է գործել զիւղերի եկեղեցեաց ժապաւնեալ մատնան բաժանելիս, այն է 4 ուրբա փոխարէն կաթիլիս զիւղից առել է 9 ու., Բախրուէլ զիւղից 8 ու., Ուփիւղիցիայից 8 ու., կասպից 9 ու. և այլն, որոնց մասին քննութիւն արել է Գորու հոգևոր կառավարութիւնը, բայց դեռ ոչ մի կարգադրութիւն չ'է արած:

Աւտորիոյ լրագրիւններից ոմանք զրա-կանորէն պնդում են, որ ուսն կառավա-րութիւնը երկաթուղու ընկերութեանց ամենատեսակ զինուորութիւններ անում է, որպէս զՌազուայ նաւթը արտասահ-ման փոխադրելու միջոցները զիւրա-յնեն իւր թէ, այդ պատճառով, երկաթու-ղու ընկերութիւնները բաւականին պա-կասացել են նաւթի ճանապարհածախ-քը:

Եթէ այս լուրերը ճշմարիտ են, ասում են թերթերը, այն ժամանակ Բազուայ նաւթը Եւրոպայում կարող է կատարե-լապէս մրցել ամերիկական նաւթի հետ, որովհետև Բազուայ նաւթը թէ՛ լաւ է և թէ՛ կիսով չափ է ժամ:

Ռուսաց ապրանքները, և մասնաւորա-պէս ճօթեղէններն ու շաքարը, սաղա-յնելու համար Բազուայ մէջ տօնաւաճառ պէտք է սահմանուի, և պարսից առեւտ-րական կենդրոններում միջնորդներ բացուին: Այսպէս խորհուրդ արին և մէ-կըզմէկու հետ համաձայնեցան Մակա-րիայում: Մօսկովայի վաճառականները և Ասորապատի ուսն հիպատոսը:

Հռովմում, յուլիսի 26-ին, թեթեւ երկ-րաշարժ եղաւ:

Պատերազմներին վերջ տալու և պե-տութեանց մէջ ծագած վեճերը խաղա-ղութեամբ — հաշտարար միջնորդներ — ձեռքով վեճացնելու համար՝ Բերնում կայացած կոնգրէսը վերջացրեց իւր նիս-տերը:

«Արձագանքը» ստոյգ լուր է ստացել՝ որ Թիֆլիսից հայրենիք գնացող խոր-ջուրի հացաթուփներ, թուով 12 հոգի, Թիֆլիսից հոգում կողպտուել են: Հա-ցաթուփները 8000 ուրբի փող են ու-նեցել, որոյ մի մասը իրանցն է եղել, մի մասը Թիֆլիսում մնացող իրանց 100-ի չափ ընկերներին:

Անցեալ տարի մի ուսն պատանի հետ ի տաւ Ալաշկալկաղից Պետեր-բուրգ գնաց ջուրի ածել սովորելու: Մի տարին չ'անցած պատանին մեծամեծ առաջադիմութիւն է ցոյց տալիս իւր ընտան — և ներքնաւ — փառաւոր ար-հեստին մէջ: Պատանու անունը վաթի-ւն Սոնիկին է:

Արաստումանի հանքային ջրերին այ-ցելուց թիւը չատ քիչ է: Պատճառը

այն կարծիքն է, իբր թէ ջրերը իրանց զօրութիւնը կորսնցրել են:

«Այսպէս» լսել է, որ Զրանսիայիցմեծ քանակութեամբ հում նաւթի և դերտի պատուէրներ են ստացվում Բազու: Ա-ռաջարկուած զինն էլ բաւականին ձե-ռնառու:

Երեկ, առաւօտեան 10 ժամին, Մա-ղաթեան թերակղզում զարտուած տախտակապ չինութիւններից միւսում հրդէհ յայտնուեցաւ: Մինչև հրաչէջների դալը ձեռաց հանգցրին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շոգեկառ. քերի անիւնների միջին մա-սը՝ ամերիկացիք փայտից չինելու յաջող փորձն արին: Այդպիսի շոգեկառ. քերի չիփթը, ձայնը, համեմատաբար, չատ նուազ է, և ցնցիւնները ասելի քիչ զգալի: Եթանութիւնը հօ կայ ու կայ: Ամրութեան մասին աւելորդ է նոյապէս խօսելը, որովհետև առաձգականութեան կողմից փայտը պոքպոտից պակաս չ'է:

Պետերբուրգում այս րոպէիս երկու անձինք կան, պ. պ. Բորդոստի և Գելա-տու: Դրանցից առաջինը կոչվում է «շոգեմեքենայ-մարդ» իսկ երկրորդը՝ «ձի-ամարդ»: Որովհետև մինը շոգեմեքենայի, իսկ միւրը ձիու արագութեամբ են վա-զում: Կրկնակութեամբ, երբ այդ մարդիկ մրցում են մէկմէկու հետ, առաջին բազմութիւն է հաւաքուած լինում միշտ: Մի անգամ Գելատուէրը 1 ժամ 30 րո-պէս և 20 վայրկեանում 20 վերտա տեղ վազեց:

Եւրոպիոյ հրէաների մէջ մի նոր ըն-կերութիւն է կազմուել, որ արդէն 25,000 անդամ և բաւականաչափ չորա-մագլուխ ունի: Ընկերութեան միակ նը-պատակն է հրէից բարոյական զարգա-ցումը, վերածնելութիւնը: Կանոնադրու-թեան ողին փոխադարձ սիրոյ և բարե-գործութեան վրայ է հիմնուած: Ամերի-կայում այդ ընկերութիւնը արդէն մի քանի հիւանդանոցներ, և ապաստարան-ներ ունի:

Անկիւղել թղթի հնարողը, պ. Մէյէր, վերջերում մի գիւտ ևս արաւ, որով թղթերի վրայի նկարները և պատկեր-ներն ևս չեն այրուել: Մէյէրը կ. Պօլ-սում տուլթանի և բազմաթիւ հասարա-կութեան առաջ փորձով ապացուցեց իւր գիւտի յաջողութիւնը: Սուլթանը հրա-մայեց իւր երկրում այդպիսի թղթեր պատրաստող գործատուներ չինել:

Խմբագիր Պ. ՍԻՄԵՆՆԱՆՑ. Հրատարակել է ԷՆՖԻՍՏԱՆՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻ ՓՈՐՁՈՒԱԾ ՈՒՍՈՒ-ՅԻՉ ցանկանում է ՈՒՍՈՒՅԶԱ-ԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԳՏՆԵԼ գա-ւառական քաղաքներում: Հասցեն «Մեղուի» խմբագրատուն:

Արաստումանի և Խմբագիր հայոց վեճակային կոնսուլտորիայի ատենի մէջ նշանակած է ածուրդ այն օ-գոստոս ամեց 22-ին: առանց կրկնա-ձուրդի կապալաւ տալոյ համար է ջ մ ի ա ծ ն ա պ ա տ կ ա ն ԵՐԿՑԱՐԿԵԱՅ Տ Ո Ւ Ն Ն՝ որ զը-

տանվում է մերձ վանաց աւագ Ե-կեղեցւոյ:

Անդամ կոնսուլտորիայի՝ Յովհաննէս վարդ. Շիրակունի.

ԲԱԳՐԱՏ ՄԻՐՈՒՄԱՆԵԱՆԻ ՈՒ-ՍՈՒՄԱՐԱՆՈՒՄԸ

Եօթն տարեկան հասակի երե-կայոց ԲՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ և ԲՆՆՈՒԹԻՒՆԸ սկսուելու են ներկայ տարուայ օգոստոսի 27-ին: Իսկ ՈՒՍՈՒՄԸ սեպտ. մէ-կին: Ուսումնարանի կանոնադ-րութիւնը ցանկացողները կա-րող են ձրի ստանալ ուսում-նարանից: Ուսումնարանը զը-տանվում է վերամիջնակի փո-ղոցի վերայ իշխան Ամատու-նու տանը № 11.

Մ ա մ ու լ ի տ ա կ ի ղ զ ու ռ ս ե կ աւ .

«ՄԱՐԱՐՈՒԹԻՒՆ և ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԳՈՅ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ ՀԱ-ՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ».

Երկասիրութիւն Ա Ր Ս Է Ն ք ա հ . Բ ա գ ր ա տ ու Ն Է Ո յ .

Ծախվում է բոլոր զբաղմունքների մօտ և Ե. Ծատուրեանցի լամպայի խանութում: գինն է 50 կ.: Նոյն տեղերում ծախվում են վերջինիս հեղինակի և երկու աշխատութիւն-ներն, այն է՝ «ՏԱՄՆ ՊԱՏԱՐԱՊ» գի-նըն է 25 կ. և «ՎԵՐՋԻՆ ՅՈՒՇԻԿ» գինն է 30 շապ:

2—10

Քաղաքային վարչութիւնը ցան-կանում է ՎԵՐՋԻՆ և ՀԱՎԱՐԱՐԻ քաղաքային տարրական ԳՊՈՑՆԵՐԻ համար Տ Ն Ե Ր վ ա Ր ձ Ե Լ առաջինի համար մի մեծ դահլիճ՝ 50 աշակերտներ համար, մի նա-խասենակով և երկու սենակով ուսուցչի համար, իւր խոհանոցով, Օղիենակի փողոցի կամ նորա մօտե-րում իսկ երկրորդի համար երկու դուր չափ բնակարան. հրաւիրում է ցանկացողներին տալ իրենց տու-նը: զիմէլ քաղաքային վարչու-թեանը:

Շամախայ ս. Սանդխտան օրիոր-դական դպրոցի համար հարկաւոր է ՄԻ ՎԱՐՈՒՅԻ և ՄԻ ՎԱԺԱՊԵՏ (այր ու կին) տարեկան 600 ուրբ-լի ուժիկով և բնակարան: Դպրոցն ունի երկու դասատուն չորս տարուայ դարձեթացով և բոլոր առարկանե-րը յանձնուած է լինելու այդ երկու-սին: Գիմէլ — Шемаха. Непечительство Армянск. женскаго училища.

Մամուլի տակից դուրս Ե-կաւ և Թիֆլիսի հայ զը-րավաճառների մօտ վա-ճառվում է Ծ Ի Լ Լ Է Ր Ի ԶԱՆԳԱԿԻ ԵՐԳԸ Թարգմանութիւն Գեորգ Բարխուդարեանցի Գինն է 20 կոպ.

Հ Ա Յ Կ Ա Ս Տ Ա Ն Ի
“ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆՈՒՆԵՐ”

Սեպտեմբերի վերջին լոյս կը տեսնի Կենդրոնական զրավաճառանոցի հրատարակութեամբ մեր «ՀԱՅԿԱՍՏԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆՈՒՆԵՐ» անունով դասատուորը հայոց դպրոցների համար. Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ը Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն հրատարգած և հիմնական փոփոխութիւնն-րի ենթարկած:

Մ. ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ. 9—10

Շուտով մամուլի տակից դուրս կը գայ նոր ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ

միջնակարգ դպրոցների համար, աշխատութիւն Հ. ԳՈՒԿԱՍԵԱՆՑ, հրա-տարակութեամբ Կենդրոնական զրավաճառանոցի: Կը ծախուի նոյն զը-րավաճառանոցում:

Նոյն տեղը ծախվում է մի և նոյն հեղինակի «ԸՆԴԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒ-ԹԵԱՆ» հին դարի երկրորդ մաքուր տպագրութեամբ: Գինն է 80 կոպ.: Գումարով գնողների համար զեջուսն կը լինի:

8—10

Զ. ԳՐԻԳՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍՏԱՆ» ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՎԻԵՆՆԱՅԻՑ ՍՏԱՅՈՒԱԾ ՀԵՏԵԻՍԱԼ ԳՐԵՐԸ.

1) Տերվիշեան — Այրի մայրն ու մի մօր որդիակը գինն է 30 կոպէկ. — 2) Բստկարեան. Առաջնորդ նամակագրութեան գաղղիներէն և հայերէն գին. 2 ուրբլի. — 3) Առողջապահութիւնը պահպանելու վերայ օգտակար կանոններ. կրթական և զբօսային տետրակներից № 1. գին. 45 կ. — 4) Արեւելեան յիշատակագիրների նամակներէ քաղուած ազատ թարգմանու-թիւն. կրթական և զբօսանքի տետրակներից № 2. 70 կ. — 5) Թոռնե-նեկ տետրակներից № 3. 70 կ. — 6) Էմինեան. երեքըզուկան բառագիրք այսինքն գաղղիներէն հայերէն, տաճկերէն. ա մ ու ռ կ ա ղ մ ու ծ գին. 8 ու. 50 կ. — 7) Չամանեան. բարոյական ընթերցուածներ. նորա-հաս անձանց և ծնողաց համար օգտակար խրատք և օրինակք. կիսալթ իւղմով գին. 85 կ. — 8) Բարոյական թատրոնի Գրիգորի կամ բարեւո-րութիւն 85 կ. — 9) Բարոյական թատրոնի Գրիգորի կամ բարեւո-րութիւն 85 կ. — 10) Բարոյական վէպեր — Ռի-նոս գեալին ողբերը № ա. 70 կ. — Վէպեր — Ֆրանսիական Սուաւէին բարոյական պատմութիւնները 70 կ. — 12) Բարոյական վէպեր — Աղաւնի կամ բարեւորութեան վարձքն ու չարութեան պատիժը 70 կ. — 13) Բարոյական վէպեր — Վիանդա, կամ օրերուն պաշտպանն Աստուած է գ. 70 կ. — 14) Բարոյական վէպեր — Մայրական սէր, կամ ձմերուան զըժ-բաղդ գիշեր մը գ. 85 կ. — 15) Բարոյական վէպեր — Փերիկանդոս կամ խղճմունքի զօրութիւնը գ. 70 կ. — 16) Նուրիճանեան փորձառական բնագիտութիւն կամ Ֆիլիկա, համառօտ օրերու արանութեամբ գին. 4 ուրբլի:

2—3

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՒՐՈՎԻՆ ՊԱՏՄԱՍ ԵՆ և շուտով մամուլի տակ կը մանեն իմ թարգմանած հեռեկալ Զ Ո Ր Ս ԳՐԵՐՈՒՆԵՐԸ.

Ա. «ԿՆՈՋ ԿՈՋՈՒՄԸ և ԴԱՏՏԻԱՐԱԿՈՒԹԻ-ՆԸ» հեղ. Լուիզա Բիւսինէրի:

Բ. «ՈՍԿԵ ԲԶԷԶ» (Ժողովրդական վէպ ամերիկական կեան-քից) հեղ. Եղգար Պօ:

Գ. «ԻՆՉՊԵՍ ԿՈՊԵԿԸ ՄԻԼԼԻՍԵ ԴԱՐՁԱԽ» (մանկ. վէպ անգլիական կեանքից) հեղ. Տիկին Բուսէնի:

Դ. «ԱՆԴԱՄԱՆՈՑ» (մանկ. վէպ դանիական կեանքից) հեղ. Անդրէասէն:

ԶՈՐՍ զբեցիկի բաժանորդագինն է 1 ուրբլի: Գրքոյնը հետզհետէ լոյս կը տեսնի մինչև առաջինից սեպտեմբերի վերջը: Ուստի խոնարհաբար խնդրում ենք այն յարգելի տիկնանց և պա-րոններին որոնք բաժանորդներ գտնելու ներութիւնը յանձն էին արել փութան ուղարկելու մեզ բաժանորդութիւնը և զրամը որպէս զի առանց յետաձգելու, ճշտութեամբ կարողանայինք որո-շել ապագրուելի օրինակների քանակութիւնը: — Օտարաքաղաք-ացիք զիմում են այս հասցեով՝ Тифлис. Грноторіо Шаха-Будай-шаву. Абас-Абатская площадь д. № 8.

Քաղաքային վարչութիւնը հասուցանում է ի զիտութիւն Թիֆլիսում թաց միւրգ վաճա-ռողներին և պարտիզի տէրե-րին որ նա ի Ա Կ ՊՏՈՒՂ-ՆԵՐԸ Թիֆլիս բերել արգելե-լու համար կարգադրութիւն-ներ է արել: Այդ պատճառաւ հրաւիրում են մրդավաճառն-րը այդ տեսակ խաւ պտուղ-ներ չը գնել և չը ծախել, հա-կառակ գէպքում դրանք կը խլուին և կ'ոչնչացուին:

3—2

Մի հայ բնաանիք ցանկանում է առաջնիկ սեպտեմբերից ուսումնա-րանների ՄԱՆՈՒԿՆԵՐ կամ ՊԱՏԱ-ՆԻՆԵՐ պահել: Զանկացողների հետ պարապում է հայ, ուսն և Ֆրան-սիացի լեզուներով, նոյնպէս և ա-ռարկաներով: Պայմանները չափաւոր են: Հարցնել «Մեղուի» խմբագրա-տանը:

Է ժ Ա Ն Գ Ն Ո Վ Ծախվում է ԿԱՐԱՍԻԻ, ԱՍՏԱՆԵՐԻ, ԾԱՂԻԿՆԵՐ. Արսենալի փողոց. 24. զեղատան վրայ.

(2—2)